ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

<ՀՀ ԱՄԷՀ ԷԱՃԱՊՁԲ19/4> ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և պայմանագիր կնքելու որոշման մասին

ք.Էջմիածին 22.03.2019թ.

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և հրավերով սահմանված ժամկետում ներկայացված որակավորման չափանիշները հիմավորող փաստաթղթերի մասին

Ընդունել ի գիտություն՝

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել հաղթող մասնակցի՝ հայտերը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

1.2 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցում էր ուղարկվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերի պահանջի վերաբերյալ: Սահմանված ժամկետում և սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել է որակավորման չափանիշները հաստատող փաստաթղթերը:

2. Ընթացակարգի հայտերը գնահատելու և պայմանագիր կնքելու որոշման մասին

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 և 1.2 կետերը հանձնաժողովը որոշեց հաստատել հաղթող ճանաչված մասնակցի գնահատման արդյունքները, ինչպես նաև <<ՀՀ ԱՄԷՀ ԷԱՃԱՊՁԲ19/4>> ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել <Լի Գազ >ՍՊԸ-ին և առաջարկել կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Գ.Հարությունյան

Անդամներ՝ ---------- Լ. Քալաշյան

---------- Ա. Ֆահրադյան

---------- Մ. Սարգսյան

---------- Գ, Պողոսյան

գնահատող հանձնաժողովի

քարտուղար՝ ---------- Կ.Խարբերդյան